

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ «ԺԱՄԱՆԱԿ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ
ԲԱՌԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ-ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՋԵՄՄԱ ԲԱՌՆԱՍՅԱՆ

Արդեն քառորդ դարից ավելի է, որ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվաբանությունից ինստիտուտի բարբառագիտությունից բաժինը ձեռնամուխ է եղել Հայերենի բարբառագիտական ատլասի ստեղծման բարդ, դժվարին, բայց չափազանց անհրաժեշտ աշխատանքին: Գրեթե ավարտվել են հավաքչական աշխատանքները, և սկսվել է նյութերի դասդասման, հետագա քարտեզագրությունից համար նախապատրաստական աշխատանքների փուլը: Իսկ հավաքչական աշխատանքներին նախորդել է «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» հրատարակումը¹: Այն յուրօրինակ հարցարանի գեր է կատարում և իր ընդգրկած նյութի առատությունը ու ծավալով նմանը չունի նկարագրական բարբառագիտությունից բնագավառում: «Ծրագրի» առաջին բաժինը կազմում են ապագա ատլասի մեջ մտնելիք բառային զուգաբանությունները, որոնց հիմքում ընկած են հասկացական նույն միավորի դիմաց տարբեր վայրերում հանդես եկող տարբեր բառանվանումները: Ատլասի քարտեզներում, որոնց մեջ կողմնորոշիչ տարրը զուգաբանությունն է, կարտացոլվի այդ բառանվանումների տարածական նկարագիրը:

Վերոհիշյալ «Ծրագրում» հասկացությունները դասավորված են իմաստային-թեմատիկ որոշակի հաջորդականությամբ: Բառերի խմբավորումն ըստ իմաստային դաշտերի, հեշտացնում է դրանց ուսումնասիրությունը և հեռանկարային հնարավորությունն ստեղծում նաև թեմատիկ քարտեզների ստեղծման համար: Այդպիսի մի թեմատիկ խումբ էլ կազմում են ժամանականիչ բառերը: «Ծրագրի» 275-րդ բառահոգվածը վերաբերում է Հայերենի բարբառներում ժամանակ հասկացության բառանվանումներին: Մոտ 500 խոսվածքային միավորներում առկա փաստական նյութը համադրելով բարբառագիտական և ազգագրական մենագրություններից և ժողովրդական բանահյուսությունից դուրս գրած նյութերի հետ կարող ենք որոշակի դատողություններ անել Հայերենի բարբառներում ժամանակ հասկացության իմաստով առկա բառային դրսևորումների ծագումնաբանության և գործառույթի մասին:

Վերացականությունը խորթ է ժողովրդի լեզվամտածողությունը: Ժամանակ հասկացությունը վերացական է, կոնկրետությունից զուրկ, դրա համար էլ ավելի փոքր հատվածներ է բաժանվել՝ հիմք ընդունելով

¹ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր (այսուհետև՝ «Ծրագիր»)։ Երևան, 1977:

բնության մեջ պարբերաբար կրկնվող երևույթները, տիեզերական մարմինների նկատելի շարժումը:

Հայոց լեզվի պատմության նախագրային ժամանակաշրջանին նվիրված աշխատության մեջ Գ. Զահուկյանը գտնում է, որ ժամանակ հասկացության ընդհանուր անվանման հարցը վաղնջահայերենում բաց է մնում: Իսկ հայերենի իրանական փոխառությունների հիմնական ածանցավոր կազմությունները ներկայացնող բաժնում ժամանակ բառի համար նա առավել հավանական է համարում ժամանակ ածանցումը²:

Հ. Աճառյանն իր Արմատական բառարանում վկայում է բառի վաղգրաբարյան աղբյուրներում հաճախակի կիրառության մասին և առավել հավանական է համարում պահլավական փոխառություն լինելը՝ ժամանակ ձևով: Իսկ ժամ բառի մասին գրում է, թե այն հայկական կառուցվածք է. ժաման բառի մեջ ան-ը մասնիկ է կարծվել և գրան հարմարեցվել է ժամ արմատական ձևը³:

Հայերենի իրանական փոխառություններին նվիրված մեծագրության հեղինակ Լ. Հովհաննիսյանը գտնում է, որ ժամ-ը կարող է միանգամայն տրամաբանական եղանակով առաջացած հայերեն բառ լինել՝ զ նախդիրով և ամ բնիկ հայերեն արմատով⁴: Այս տրամաբանությամբ առաջնորդվելով կարելի է ենթադրել, որ ժամ հայերեն արմատի և -անակ իրանական փոխառյալ վերջածանցի բաղադրությամբ է առաջացել ժամանակ բառը:

Նկատելի է, որ խիստ վերացական հասկացություն լինելով՝ ժամանակ բառի դործառույթը հայերենի բարբառներում սահմանափակ է: Իհարկե, անառարկելի է, որ հայկական ժողովրդական հեքիաթներում առկա են և՛ ժամանակ բառը, և՛ դրանով կազմված հարադրություններն ու բառակապակցությունները (ժամանակով, ժուկով-ժամանակով, ավալ ժամանակ և այլն): Դիտարկումները ցույց են տալիս, որ ժամանակ բառը հեքիաթներում հանդես է գալիս պատումի սկզբում, իսկ ընթացքում հազվադեպ է գործածվում՝ իր տեղը զիջելով ժողովրդի բառապաշարում առավել տարածված հոմանշային տարբերակներին: Կարելի է կարծել, որ ժամանակ բառի դործառույթը հանդիսավորություն է հաղորդում հեքիաթին, հրապարակախոսական ոճին հատուկ պայմաններ ապահովում հեքիաթասացի համար: Այսինքն՝ ունի ոճական արժեք:

Հեքիաթներում զուգահեռաբար գործառում են ժամ ու ժամանակ և ժում ու ժամանակ բաղադրությունները, որոնցով ավելի համոզիչ է դառնում ժամ > ժում անցումը.

Ժամ ու ժամանակը մանցին ...

Ընցավ ժում ու ժամանակ մը, թաքավոր հիվրնդցավ⁵:

2 Գ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 269:

3 Նույն տեղում, էջ 569:

4 Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան(այսուհետ՝ ՀԱԲ). Հ. 2, Երևան, 1973, էջ 222:

5 Լ. Հովհաննիսյան. Հայերենի իրանական փոխառությունները. Երևան, 1990, էջ 94:

6 Հայ ժողովրդական հեքիաթներ. Հ. 13, Երևան, 1985, էջ 42-48 (բարբառային օրինակների համար հղում էի կատարվել միայն այն դեպքերում, երբ տեղեկատու աղբյուրը ըստ «Մրազրի» հավաքված նյութերն են):

Հայկական ժողովրդական հեքիաթներում ժամանակ հասկացության իմաստով հանդիպում է ժուկ բառաձևը: Այն կիրառելի է հատկապես ժուկ-ժամանակ, ժուկով-ժամանակով հարադրական բաղադրությունների կազմում: Ժուկ-ը նաև ինքնուրույն գործառույթ է հանդես բերում իրանի հայախոս գավառների (Փերիա, Բուրվառ) խոսվածքներում՝ ժուգ ձևով:

էթալու ժուգը չի (Սպահան):

Ժուկ-ի մասին Հ. Աճառյանը գրում է, որ արդի բարբառներում այն սովորական է, թեև հայտնի չէ նրա ծագումը⁷: Մենք կարծում ենք, որ ժուկ-ը ժամանակ բառի կրճատված և հնչյունափոխված ձևն է:

Այն բոլոր խոսվածքներում, ուր համապատասխան բառահոգվածի դիմաց գրանցվել է ժամանակ բառանվանումը, իբրև օրինաչափություն՝ դրա կողքին առկա է նաև մի այլ հոմանշային տարբերակ: Դրանք հիմնականում պատմական շփումների արդյունքում այլ լեզուներից փոխառություններ են, որոնք առավել կոնկրետություն բերելով, ունեն իմաստային նրբերանգներ:

Տարածական բավական մեծ շառավիղ է ընդգրկում ժամանակ հասկացության դիմաց գործառույթ գաճ համապատասխանությունը: Ըստ Արմատական բառարանի՝ այն փոխառություն է նոր իրանական լեզուներից: Սկզբնապես ունեցել է տեղ, աթուռ իմաստները և այդպես է վկայված մեր հին գրավոր աղբյուրներում: Բառն աստիճանաբար ձեռք է բերել «գաճ բարձրանալու ժամանակ» նրբիմաստը⁸: Իսկ Վանի բարբառի քննությունը նվիրված աշխատության մեջ Հ. Աճառյանը գաճ-ը բխեցնում է սանսկրիտի Gahata (շարական, օրհներգ) բառից՝ ենթադրելով, որ «աղոթելու ժամանակ» մասնավոր գաղափարից աստիճանաբար անցում է կատարվել «ընդհանրապես ժամանակ» գաղափարին, ու գաճ-ը դարձել է ժամանակ բառի համապատասխանությունը: Այն արդեն իսկ փոխատու լեզվում ժամանականիչի արժեք է ձեռք բերել՝ տեղ > ժամանակ անցումով⁹: Հենց այդ իմաստով էլ գաճ ժամանականիչը թափանցել է հայերենի բարբառներ՝ իբրև ժամանակ վերացական հասկացության բառանվանում:

Ժամանակի գաղափարի այսպիսի ըմբռնման լավ օրինակ է նաև հակառակ երևույթը՝ ժամանակ > տեղ անցումը փաստող «ժամ» (եկեղեցի) բառը, որ գործառույթ է շատ բարբառներում: Ժամասացության, աղոթքի ժամ իմաստից անցում է կատարվել ժամերգություն կատարելու տեղը մատնանշող հաստատության իմաստին, և բարբառներում ժամ-ը դարձել է եկեղեցի դժվարահունչ բառի իմաստով գործառույթ հոմանշային տարբերակ, քանզի հնում ժամանակը որոշվել է հատկապես եկեղեցական արարողություններով:

Ժամանակ հասկացության իմաստով գաճ ժամանականիչ բառի գործառույթը տարածական այսպիսի պատկեր ունի. կիրառվում է բարբառների արևմտյան խմբակցության հարավկենտրոնական բարբառախմբում (Մուշ, Ալաշկերտ, Սասուն, Խնուս...), Վանի կամ հարավային միջբարբառախմբում (Վան, Շատախ, Մոկու...): Գաճ ժամանականիչը լայնորեն գործա-

7 Հ. Աճառյան. ՀԱԲ. հ. 2, էջ 222:

8 Նույն տեղում. հ. I, Երևան, 1971, էջ 286:

9 Հ. Աճառյան. Քննություն Վանի բարբառի. Երևան, 1953, էջ 191:

ոում է նաև բարբառների արևելյան խմբակցության հյուսիսարևելյան բարբառախմբի մեջ մտնող Բայագետի և հարավարևելյան՝ Խոյ-Մարաղայի բարբառի բազմաթիվ խոսվածքներում: Վաղ շրջանի փոխառություն լինելով՝ գաճ բառը ենթարկվել է տարածքներից յուրաքանչյուրի համար միանգամայն օրինաչափ հնչյունափոխության, ինչպես՝

Մուշ-Ալաշկերտ – գ ա կամ գ ա իս

Վան, Մոկս – կ ա իս

Բայաղետ-գա՛իս և այլն:

Ինչ վերաբերում է գաճ բառի գործառական արժեքին, նշենք, որ այն առավել հաճախ իբրև կապական բառ է հանդես գալիս խոսքի մեջ ձևավորելով ժամանակի պարագա:

Կօդօրումի գ ա իս գ ու գ ը ու պըզգիգ էր (Մուշ):

Գաճ բառին բնորոշ է նաև գոյականական կիրառությունը: Օրինակ՝

Ա՛փօ, քու մեռնէլու գա՛իսն հ՛ընցէ (Բայաղետ):

Բառակազմական մակարդակում գաճ բառի համար հատկանշական է բաղադրությունների կազմում հանգես գալը: Այսպես՝ Մշո տարածքի Մկրագոմ, Հացիկ գյուղերի խոսվածքներում այժմ հասկացության դիմաց գրանցված հիտկա ժամանականիչն ուղղակի գրաբարյան այժմ (այս + ժամ) կցական բարդության կաղապարն է ներկայացնում՝ իգա+գաճ և հնչյունափոխվելով՝ > հիտկա: Վանում, Շատախում, Մոկսում սովորական է հանկյախ (այն+գաճ) բառի դործառույթը: Բերենք օրինակ Շատախի բանահյուսությունից.

Հանկյախ ընչ տէրտէր տընէն իլիր ի տուս, կյըլօխ վէրէ՛ն էր¹¹:

Գաճ բաղադրիչն առկա է նկարագրական եղանակով ժամանակը, օրվա տվյալ պահը ճշտող այնպիսի բառաձևերում, ինչպես Մշո Մկրագոմ, Կոպ, Հացիկ գյուղերի խոսվածքներում առկա ակրագ՛աճ (կեսօր, նախաճաշի ժամ) կամ, ասենք, Ալաշկերտի հեքիաթներում հանդիպող խրամգախ (հրամելու, ընթրիքի ժամ) կցական բարդություններում, ինչպես նաև իմաստով համարժեք՝ ճաշվա գախ, հիրգվա գախ և այլն: Նկատելի է, որ վերջին հաշվով դրանք բոլորն էլ բառակապակցություններ են՝ բառանջատ դադարով, առանձին բառաշեշտով: Հաճախադեպ են նաև գաճ բառի հարադրությունները՝ գախ-գախ, գախօցգախ (ժամանակ առ ժամանակ): Վանի բանահյուսության մեջ հաճախադեպ է օրինաչափորեն հնչյունափոխված կ'ախ-կ'ախ ձևը, ինչպես Արճակ գյուղի խոսվածքով գրառված հեքիաթում.

Կ'ախ-կ'ախ մէր ծօլու մէջ լօղկըցօղի ջանի վըրէն քյօս-քյօր չի պւնէ¹¹:

Գախօցգախ ճրժու կօրի վըրէն գ արէհադ գ'էլնէր(Մշո Կոպ գ.):

Նկատենք, որ Մշո բարբառում հ>խ հնչյունափոխությունն օրինաչափ է, թեև առկա է որոշ բառերում բառավերջի դիրքում (ճամրախ, գախօցգախ):

10 Մ. Մ ու ը ռ ա գ յ ա ն. Շատախի բարբառը. Երևան, 1962, էջ 177:

11 «Ազգագրական հանգէս». գիրք 22, Թիֆլիս, 1912, էջ 140:

Կարսի Մավրակ գյուղի խոսվածքում առկա հազմանգալս բառաձևը, հավանաբար, անագան+գահ բաղադրությունն է: Անագան-ը, ըստ ՆՀԲ-ի¹², նշանակում է ուշ, տարաժամ:

Ժամանակ հասկացության դիմաց արևմտյան խմբակցության բարբառներից շատերում գրանցվել է ատեն բառանվանումը: Այն նույնպես վերոհիշյալ տեղ > ժամանակ անցումով առաջացած ժամանականիչ է: Ըստ Արմատական բառարանի՝ բնիկ հայերեն ատեն բառը նախապես ժողով, ժողովասրահ է նշանակել: Այդ իմաստով գործառել է վաղ գրաբարում, որից էլ ժառանգաբար անցել է արդի հայերենի 2 գրական տարբերակներին: Ուշ գրաբարյան մատենագրություններում ատեն տեղանիչը աստիճանաբար ձեռք է բերել ժամանականշունթյուն (ատենան հողմոյ = քամի փչելու ժամանակը)¹³: Այսպիսով ժողով > ժողովի ժամանակ > ժամանակ իմաստային անցումով առաջացած ատեն ժամանականիչ բառը լայն գործառույթ է ձեռք բերել արևմտյան խմբակցության բարբառներում:

Խարբերդ-երդնկա, Արաբկիր, Մարաշ, Ակն, Պոլիս – ատեն

Ռոդոսթո, Ն. Նախիջևան – ադէն

Ջեյթուն – ագին

Տիգրանակերտ, Մալաթիա – ադին և այլն:

Նկատելի է, որ ատեն-ը գործառուում է և՛ գոյականաբար, և՛ մակբայաբար, ինչպես՝

Ատեն չունիմ: Ինչո՞ւ ատենին չէս դար(Արաբկիր):

Այս բառին, սակայն, առավել բնորոշ է մակբայական կիրառությունը.

Ադ ագին դէրդէրը դուքա յա (Մալաթիա):

Ժամանակ հասկացության իմաստով գործառող ատեն ժամանականիչ բառին բնորոշ է նաև կապական բառի արժեքով կիրառությունը և խոսքում ժամանակի պարագա ձևավորելը: Բերենք օրինակ Հյուսիսարևմտյան միջբարբառախմբի մեջ մտնող Եդեսիայի բարբառով.

Լօղգրցած ադէնա սաբօնա աչքա կացէր է¹⁴:

Փոքր Ասիայի բարբառախմբի մեջ մտնող Պոլսի, Արաբկիրի բարբառներում գործառուում է ատենօք ձևը՝ հին ժամանակ, հնում իմաստով: Պոլսի բարբառում կրկնական ատեն-ատեն բաղադրությունը կիրառվում է ժամանակ առ ժամանակ, երբեմն-երբեմն իմաստներով: Խարբերդի բարբառում գործառող ատենակ > ատենկօվ ձևը, Աճառյանի հավաստմամբ, առաջացել է ժամանակ բառի համաբանությունով:

Ժամանակ հասկացության դիմաց հայերենի բարբառներում գործառող բառանվանումների շարքում ամենատարածվածը փոխառյալ վախտ բառն է: Այն հայերենի բարբառներին է անցել արաբերենից (անմիջականորեն կամ էլ պարսկերենի միջնորդությամբ): Օրինաչափորեն հնչյունափոխությունների ենթարկվելով՝ լայն գործառույթյուն է ձեռք բերել և՛ արևելյան, և՛ արևմտյան խմբակցության բարբառներում, ինչպես, ասենք, Արարատյան բարբառի շատ խոսվածքներում առկա վախտ բառանվանու-

12 Նոր բառգիրք հայկազգեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ). հ. 1, Երևան, 1979, էջ 101:

13 Հ. Ա ճ ա ո յ ա ն. ՀԱԲ. հ. 1, էջ 286:

14 Ա. շ ա ն ե յ ա ն. Եդեսիայի բարբառը. – Հայերենի բարբառային առլաս. պրակ 1, Երևան, 1982, էջ 240:

մը Լոռու խոսվածքում վօխտ ձևով է դրսևորվում (անկանոն հնչյունափոխություն), ինչպես՝

Մէր վօխտը ըթավուր բանէրը մէնձ ամօթ էր¹⁵։

Բարբառներից յուրաքանչյուրն այդ բառը հարմարեցրել է իր հնչյունական օրենքներին։ Այսպես՝

Խոյ, Սալմաստ-վախտ

Բայագետ-վախտ

Քեսաբ-վախտ

Հաջրն-վախտ

Իգմիրի Նիկոմեդիա-վախտ

Վախտ ժամանականիչ բառը կիրառվում է գոյականաբար և կապական բառի արժեքով։ Տրական հոլովածևով խոսքում հանդես է գալիս ժամանակի պարադայի արժեքով։ Օրինակ.

Վախտը թօ դա, նօր կրպատմէմ ամէն պան։

Հարսանքի վախտը նօր տէհէլ ա իբա կընդան (Երևանի Նորք գ.)։

Վախտէն ցէնուօղը վախտէն կընծի (Քեսաբ)¹⁶։

Եթե ժամանակ հասկացություն վախտ, դահ, ատեն բառային դրսևորումները իմաստով համարժեք են, ապա որոշ խոսվածքներում կիրառվող չախ, վադա, սըրա փոխառյալ ձևերը կիրառության սահմանափակ ոլորտ ունեն։ Վերջիններս խոսքում հանդես են բերում լրացուցիչ դործառական բաշխում շնորհիվ իրենց արտահայտած նրբիմաստի։

Չախ-ը փոխառություն է թուրքերենից և ունի պահ բառիմաստը։ Գործառության հիմնական ոլորտը արևելյան խմբակցության բարբառներն են (Թիֆլիս, Ղարաբաղ, Խոյ), ուր այդ բառն առավել հաճախ հանդիպում է բաղադրությունների կազմում իբրև երկրորդ բաղադրիչ, ինչպես, ասենք, Խոյի բարբառում կիրառվող իրվանչախ ժամանականիչ բառում իրիկնապահ հասկացության իմաստով։ Նույն իմաստն ունի նաև Ղարաբաղի բարբառում առկա ըրգ'ունաչախ բաղադրությունը։ Չախ փոխառյալ բառով և ցուցական դերանուններով հայակազմությունները հաճախ են հանդիպում արևելյան խմբակցության բարբառներում, ինչպես՝ էն չախը, էս չըխէն, էն չախին։ Հոլովական վերջավորություններ ստանալով՝ ժամանակի պարադա են ձևավորում նախադասության մեջ։ Բերենք մեկ օրինակ Ղարաբաղ-Շամախի միջբարբառախմբի մեջ ընդգրկվող Բուրդուրի բարբառով.

էն չախին նչանածնիս տէսնում ինք, փախչում ինք¹⁷։

Կամ, ասենք, Թիֆլիսի բարբառով

էն չախը կօսիմ քիգ մառթ իս, Պեպօ...։

Թուրքերենից փոխառյալ վադան, ընդհակառակը, գոյականական կիրառություն ունի և «սահմանված ժամկետ» իմաստով կիրառվում է թե՛ արևելյան, թե՛ արևմտյան խմբակցության բարբառներում։ Ղարաբաղի բարբառում վադան եկավ արտահայտությունը գործածվում է ժամկետը լրացավ իմաստով։ Կարսի Փալդրվան, Աղջաղալա գյուղերի խոսվածքներ-

15 Մ. Ա ս ա տ ր յ ա ն. Լոռու խոսվածքը. Երևան, 1968, էջ 168։

16 Թ. Ջ ո լ ա ք ե ա ն. Քեսապ. հ. Բ, Հալէպ, 1998, էջ 384։

17 Ն. Մ կ ր տ չ յ ա ն. Բուրդուրի բարբառը. Երևան, 1971, էջ 227։

րում վազա կըզրել կայուն բառակապակցության իմաստը հայտնի է բուլորին. այն ամուսնական արարողակարգի պարտագիր հանգամանքներից մեկն է և նշանակում է հարսանիքի օրը որոշել, ժամկետ նշանակել, ինչպես Մուշում ընդունված է ասել՝ օր կըզրել: Օրինակ.

Կէրսարն ու քավօրը կիրադի գուկան վադա կըզուէն (Փալգրվան գ.):

Լոռվա խոսվածքներում վազա-ն «նախատեսված ժամկետ» իմաստով նույնպես հաճախ է հանդիպում.

Ա՛յ մառթ, վազէդ թըմամվէլ ա, պըտիս դընալ էն ըշխարքը¹⁸:

Դիտարկումները ցույց են տալիս, որ ժամանակ հասկացության իմաստով գործառուղ բառանվանումները հոմանշային նկատելի բազմազանությամբ են հանդես գալիս հայերենի շատ բարբառներում: Երգնկայի բարբառում, օրինակ, առկա են ժամանագ, ազէն, վախտ, սըրա համապատասխանությունները: Բերենք օրինակներ բարբառի ուսումնասիրությանը նվիրված մենագրությունից.¹⁹

Ժամանագին վարթաբէդ մը ու փօքրավօր մը ջամփա դէլլան:

Ադ ադէնը էշը դըզըռուա:

Վախտին ախկադ ընդանիք մը գըլլա:

Ըն սրրաին մէձավօրը հըրաման գանէ:

Ժամանակ հասկացության իմաստով հայերենի բարբառներում առկա բառանվանումների հոմանշային տարբերակները՝ առէն, վախտ, գահ, սըրա, չախ, հանդես գալով կապական բառի արժեքով, նախադասության մեջ ժամանակի պարագա են ձևավորում, ինչպես՝ հընձի ժամանակ, գիշէր առէն, քընած վախտ, հարսընքի գախ, ազրագգահ ...:

Նշանավոր լեզվաբան Ա. Մեյնե նկատում է, թե հայերենում ժամանակ բառը եզակի թվով կիրառվում է որոշակի իմաստով, բայց ժամանակային տարբեր մասեր ընդգրկող և անորոշ ամբողջությունն արտահայտելու համար հաճախ դիմում են հոդնակիին²⁰: Այս միտքը հավասարապես վերաբերում է հայերենի բարբառներին: Ժամանակ բառը և նրա հոմանշային տարբերակները հոգնակի թվով կիրառվելիս անորոշություն են հաղորդում գործողության կատարման ժամանակին, ինչպես՝

Վաղի ժամանակնէրումը մըն մէժ քար ա թօլ իլալ, ինգյալ (Գորիս)²¹:

Ավալ վախտընէր ճըժէրաց մախ չի իլէ (Արճակ)²²:

Ամփոփելով նյութի քննությունը՝ կարող ենք հայերենի բարբառներում ժամանակ վերացական հասկացության բառային դրսևորումներն ըստ ծագման և տարածական ընդգրկման խմբավորել այսպես.

1. Արաբական փոխառությունների շերտին պատկանող վախտ ժամանականիշը գործառուում է և՛ արևելյան, և՛ արևմտյան խմբակցության բար-

18 Մ. Ա ս ա տ ը յ ա ն. նշվ. աշխ., էջ 167:

19 Դ. Կ ո ս տ ա ն գ յ ա ն. Երգնկայի բարբառը. Երևան, 1979:

20 Ա. Մ ե յ ե. Հայագիտական ուսումնասիրություններ. Երևան, 1978, էջ 402:

21 Ալ. Մ ա ը գ ա ը յ ա ն. Գորիսի բարբառը. Երևան, 1974, էջ 287:

22 Հալ ազգագրություն և բանահյուսություն. Կ. 8. Երևան, 1978, էջ 106:

բառներում: Դրա տարածված և հաճախական կիրառությունը թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ բառը գործածական է թուրքերենում և պարսկերենում, որոնց ազդեցությունը հայ բարբառների վրա ավելի ցայտուն է:

2. Իրանական լեզուներից փոխառյալ գա՛հ ժամանականիչի գործառույթն ընդգրկում է ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան խմբակցության որոշ բարբառներ: Հին փոխառություն լինելով բառն օրինաչափորեն հնչյունափոխվել է, ինչպես՝ գա, գախ (Մուշ), կ'ախ (Վան, Շատախ, Խոյ), գա'խ (Բայազետ) և այլն:

3. Բնիկ հայերեն «ատեան» բառից սերող ատէն բառաձևը գործառում է բացառապես արևմտյան խմբակցության բարբառներում՝ Արաբկիր, Պոլիս, Ակն, Մարաշ-Ջեյթուն, Խարբերգ-Երզնկա, Մալաթիա, Տիգրանակերտ և այլն:

4. Չախ, սըրա, վադա՝ թուրքերենից փոխառյալ բառաձևերը հայերենի բարբառներում ձեռք են բերել որոշակի գործառական արժեք՝ պա՛հ, պայմանաժամկետ իմաստներն արտահայտելու համար:

Նկատելի է, որ հայերենի բարբառներում ժամանակ հասկացության բառային դրսևորումների հոմանշային առատության պատճառն այդ բառին իմաստային նրբերանգներ հաղորդելն է:

ФУНКЦИОНАЛЬНО-ГЕНЕТИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ НАИМЕНОВАНИЙ ПОНЯТИЯ "ВРЕМЯ" В АРМЯНСКИХ ДИАЛЕКТАХ

ДЖЕММА БАРНАСЯН

Резюме

Абстрактность чужда народному языковому мышлению. Считающиеся абстрактным понятием наименование времени согласно акад. Г. Джаукяну, в раннеармянском языке остается открытым. Встречающиеся в армянских диалектах параллели понятия время представляют следующую картину. Довольно большой радиус действия имеет иранское заимствование գահ, которое в каждом говоре подверглось звуковым изменениям, свойственным данной территории. В говорах западной группы функционирует параллель ատեն, являющаяся истинно армянским словом. Как ատեն, так и գահ приобрели значение указателя времени посредством перехода место-время (ատեն — для выражения времени собрания, գահ для выражения времени восшествия царя на престол). Это явление известно во многих языках. Почти общеармянское функционирование приобрело заимствованное слово վախտ в значении времени. Оно употребляется в диалектах как восточной, так и западной групп. Если параллели վախտ, գահ, ատեն заменяют наименование времени во всех его функционированиях, то формы չախ, վազա, ժուկ, սըրա имеют ограниченные сферы употребления. Исключительно абстрактное, лишённое конкретности наименование времени не может функционировать в народном языке.